Հանց պատուակ(ա)ն է եւ ազնիւ .
Վարձքն ի կշիռ դատողական,
Թէ լինի հատ մանանխոյ .
Նա կըշռեն ի դէմ լերան :

Ով է տեսեր հանց դատ(ա)ւ(ո)ր ..
Կամ յիր(ա)ւի հանց դ(ա)տ(ա)ստ(ա)ն .
Որ չկորի մազմի դլխոյ .
Զրկանքն ի տէրն դառնան :

Որք որ սակաւ մի վարձք ունին .
Եւ թանձրամած մեղօք հեծան,
Զմեղս ի վ(ե)ր(այ) մեղաց կուտեն .
Սակաւ վարձուցն մերկանան :

Մի անդամ խօսի ա(ստուա)ծ .
Եւ զերկու ձայնն լսան,
Մեղաւ(ո)ր(ա)ցն եւ արդ(ա)րոցն .
Որք ըղհատուցումն գործոցն տան :

Այսպէս խօսի հետ արդ(ա)րոցն .
Եկայք ի հօր իմ օթեւան,
Ժ(ա)ռ(ա)նկեցէք ըղպատ(րա)ստե(ա)ն .
Եւ զանըսպառ ուրախութե(ա)ն :

Այսպ(էս) խօսի մեղ(ա)ւոր(ա)ցն .
Զեմ ճ(ա)ն(ա)չեր չէք իմ արժան,
Հանէք ի խաւարն արտաքին
Ջծ(ա)ռ(ա)յքդ որ չար են ւ անպիտան :

Մեղ(ա)ւ(ո)րքն յամօթ լինին
Բայց ի սգոյ մէջըն կենան,
Ո(ր)պ(էս) զոչխարըս մոլորեալ .
Որ ի գայլոցըն վշտանան :

Ն(ո)ք(ա) են հօտ ս(ա)տ(ա)ն(ա)յի .
Որ ժ(ո)ղ(ո)վէ զձախակողմեան,
Ն(ո)ց(ա) զդժոխսն է պ(ա)տր(ա)ստեալ .
Անուր հարիւր հազար հեծան :